ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Սարգիշոփի 1

№ 4823-Ա « 28 » նոյեմբերի 2025 թ.

ԵՐԵՎԱՆ, ԷՐԵԲՈՒՆԻ ԱԶԱՏԱՄԱՐՏԻԿՆԵՐԻ ՊՈՂՈՏԱ Հ.193/5 ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԵՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՍՎԵՏԼԱՆԱ ՎԼԱԴԻՄԻՐԻ ՋՈՒԼՀԱԿՅԱՆԻ, ԱՐԹՈՒՐ ՆԻԿՈԼԱՅԻ ՋՈՒԼՀԱԿՅԱՆԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հարցի քննարկման համար հիմք է հանդիսացել Սվետլանա Վլադիմիրի Ջուլիակյանի (ծնված 14.12.1957թ.) և Արթուր Նիկոլայի Ջուլիակյանի (ծնված 19.11.1978թ.) դիմումները:

Հաշվի առնելով, որ բնակելի տունը կառուցվել է մինչև 2001 թվականը, ՀՀ կադաստրի կոմիտեի 27.07.2022թ. հ.ԱՏ-27072022-01-0991 տեղեկանքը, «Հայաստանի ազգային արխիվ» ՊՈԱԿ-ի 14.06.2021թ. հ.Հ-6887 գրությունը, Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության 17.11.2025թ. հ.20-Ել-Դ-140179-23 եզրակացությունը, համաձայն որի ք.Երևան, Էրեբունի Ազատամարտիկների պողոտա հ.193/5 հասցեում բնակելի տան զբաղեցրած և դրա սպասարկման համար անհրաժեշտ հողամասը համապատասխանում է հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ մասի 1, 2, 3 կետերով սահմանված պահանջներին և ընդգրկված չէ նույն օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված հողամասերի ցանկում, ղեկավարվելով «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» օրենքի 1-ին հոդվածով, ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի հ.2387-Ն որոշմամբ.

1.Վերականգնել ք.Երևան, Էրեբունի Ազատամարտիկների պողոտա հ.193/5 հասցեում գտնվող գույքային միավորների նկատմամբ Սվետլանա Վլադիմիրի Ջուլիակյանի, Արթուր Նիկոլայի Ջուլիակյանի սեփականության իրավունքը բնակելի տան զբաղեցրած և դրա սպասարկման համար անհրաժեշտ 202.73քմ մակերեսով հողամասի չափով՝ ճանաչելով նրանց սեփականության իրավունքը 202.73քմ մակերեսով հողամասի և դրա վրա գտնվող շենք-շինությունների նկատմամբ:

2.Հողամասի սահմանները որոշվում են Երևանի քաղաքապետի կողմից հաստատված հատակագծով:

3.Երևան, Էրեբունի Ազատամարտիկների պողոտա հ.193 հասցեի բնակելի տանը տրամադրել «ք.Երևան, Էրեբունի Ազատամարտիկների պողոտա հ.193/5 տուն» հասցեն:

4. Հիմք ընդունելով Երևան քաղաքի ավագանու 2024 թվականի սեպտեմբերի 10-ի N 204-Ն որոշմամբ հաստատված՝ Երևան քաղաքի գլխավոր հատակագիծը՝

ք.Երևան, Էրեբունի Ազատամարտիկների պողոտա հ.193/5 հասցեում գտնվող 202.73քմ հողամասի գործառնական նշանակությունը սահմանել բնակելի կառուցապատման:

5.Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Երևանի քաղաքապետին կամ դատական կարգով՝ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

6.Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության պետի վրա:

7.Որոշման կատարման հսկողությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարի վրա:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ